



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 23

ՏԱՐԱԹ

3 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ

Ցարեկան 50 Ղրշ.

Վեցամսեայ 25 ,

ԳՈՒՍՈՒՑ ՀԱՄԱՐ

Ցարեկան 54 Ղրշ.

Վեցամսեայ 27 ,

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

Ցարեկան 42 Ֆր.

Վեցամսեայ 6 ,

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել. և երախտաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

Մենք ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ 1900.

ՎՐՏԱԳՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1906,

Հանդերձ ժիւռիի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բոլանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՑ Ե Ի ԸՆԿ

Մենք մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու.

Կ. Պոլիս, Պաղչե-գաբու, Օոգոսի. Պաֆ (Էօսիւր-եփեկէի) վաճառատան դիմաց Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԵՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

(T. آصادوریان) شرکت مرتبه مطبخه — باب عالی جاده سنده نوسم ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեի Թիւ 52

Հատը 40 փարա



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
 Բիւսնգամայն մեքենաներ
 կը գտնուին

Ձեռքի մարդ Սինգերի մեքենան կը գտնէ :

Սինգերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինգեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

Սինգերի
 Ընկերութեան
 Վաճառատան
 Մասնաճիւղեր

- | | |
|------------|--|
| ԲԵՐԸ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿՍ.Լ.Ա.Թ.Ա | (1. Սինգեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինգերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը :

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ :
 բայց էական կէտն է չլաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱԾՈ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 23

ՇԱՐԱԹ

3 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

ԱՐՏԱՌՈՑ ՍԽԱԼՆԵՐ

Ոչ նուազ էական գիտելիքներ կան սարքուած սեղանի մը շուրջ, որոնց վրայ պատահութիւն չենք ունեցած խօսիլ: Բայց ներկայ հղանակին ուր երեկոյթներ և խնջոյքներ իրարու կը յաջորդեն, կարծէ որ մէկ երկու գիտողութիւններ ընենք այդ առթիւ, նա մանաւանդ ծափերու և բաժակներու վրայօք:

Պիտի ըսէք թէ՝ ասոնք խնդիրներ չեն: Մենք, ընդհակառակը, կարելոր կը նկատենք այս կարգի կենցաղագիտական գիտելիքները և կուզենք ծանրանալ պահ մը, պակասներ որոնք ապահովապէս սեղան մը խանդարելու, հանդէս մը նսեմացնելու չափ վտանգաւոր են:

Երբ սեղանի մը հրաւիրուած են

մէկ քանի տասնեակ կոշնականներ, անխուսափելի հարկ մըն է, որ շատերեղան շնորհաւորական երկու խօսք ընեն սեղանը սարքողին ի պատիւ: Պատշաճութիւնը կը պահանջէ որ ատոնք ըլլուին ճաշին այն միջոցին, ուր կերակուրը կերուած ըլլալով, կը մնայ միայն պտուղը ճաշակել: Զաշը եթէ զուարթամտութիւն կը բերէ, այն ալ այն ատենն է միայն ուր ստամոքսը այլ եւս չի բողբոջեր: Անուրանալի ճշմարտութիւն մըն է որ անօթի փորով և տխուր դէմքով ոչ բան մը կը խօսուի և ոչ ալ կը դրուի, ինչպէս կըսէ փիլիսոփան «ճշմարիտ երիտէսին հիմը ողջմտութիւնն է»: Ուստի երբ սեղանի մը կոշուած ըլլանք, խօսելու փափաքնիս զսպենք, մինչեւ վերջին պնակը և

մեր զուարթամտութիւնը փայլեցնենք այն ատեն միայն, երբ պտուղը մէջտեղ բերուի:

Այս կանոնը, մեր կարծիքով, անհրաժեշտ հարկ մըն է որուն պէտք է հետեւիլ:

Գալով ծափին, այս ալ ոչ նուազ կարեւոր խնդիր մըն է: Ատենօք, ցաւելով կը տեսնէիք թէ կիները, օրիորդները, ամօթխածութեան չափազանց զգացումէ մը դրդեալ, կը մերժէին բարեգործական հանգէսներու մասնակցիլ:

Հիմա ուրախ ենք տեսնելով որ կիներ և օրիորդներ յօժարակամ կուգան կը նուագեն, կ'երգեն հանգէսներու մէջ, որոնց արգիւնքը պիտի ծառայէ դպրոցի մը, հիւանդանոցի մը, որբանոցի մը և կամ, ինչպէս վերջին կիրակին տեսանք եկեղեցւոյ մը բացը գոցելու համար:

Բայց նկատելի կէտը սա է որ, երբ ծափահարութիւններով, պահանջումներով ի տես կը կանչուին անոնք, բաներ որոնք երգեցիկ սրճարաններու մէջ միայն կը լսուին, տարակոյս չիկայ թէ հանդիսականները հեռի կ'ըլլան գիտնալէ թէ՛ ընտանեկան այդպիսի հանգէսի մը և թատերականի մը միջեւ պէտք է տարբերութիւն մը դնել:

Ի տես կոչել ընտանիքի մը զաւակը, որ իր մասնակցութեամբ եկած է բարոյապէս նպաստել բարենպատակ հանգէսին, այնպէս՝ ինչպէս թատրոնի երգիչ մը կամ երգչուհի մը, ահա տեղեղութիւնը զոր կը գործադրեն հոս հոն, և որոնց գիտեւ տուող մը չիկայ, ոչ ալ արգիւղ:

Ահա նկատելի և ուղղելի բան մը մեր համայնքին մէջ որ իր տեղը ու

թեամբ կրնայ չատ մը սիրտկոտրտուքներու և անպատեհութիւններու տեղի տալ:

Ծափահարութիւնը քաջալերական մըն է ինքնին, նուագողին կամ երգողին համար, բայց անգամ մը այդ մեծարանքը ըլլաւի՞ վերջ երկրորդ անգամ կրկնել և ստիպել որ այդ շնորհալի տիկինը կամ օրիորդը երկրորդ, երրորդ, չորրորդ անգամը ըլլալով բեմ գայ և իր ներկայութեամբ գոհացում տայ պահանջկոտ հանդիսականներու... ասիկա տգեղ է ըստ իս և անշուշտ ամէն անոնց համար որոնք լըջօրէն կը խորհին այս տեսակ փափկանկատութիւններու վրայ:

Ուստի եթէ ոչ առաջարկ մը՝ գէթ խնդրանք մ'է այս մեր կողմէն, ի յարգանս կենցաղագիտութեան և ի փրկութիւն ամէն անոնց՝ որոնք կը զոհուին այս տգեղ սովորութեան:

Ամէն բարենպատակ ներկայացումներու առթիւ լաւ կ'ըլլայ եթէ ցուցամատնիս և փթամատնիս երեւցնենք, փոխանակ ահագին թաթերնիս շարժելու:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ Աղգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանսօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:



Ա Ռ Մ Ա Ն

Չէ՞ք կարծեր թէ անուաններն ալ իրենց հմայքը ունին:

Օրինակի համար երբ Մալվինա անուանը կը լսեմ, ինծի այնպէս կուգայ թէ այդ անուանը կրող օրիորդը անպատճառ խոշոր սեւ աչքեր ունի, բոլորովին սպանիական աչքեր. այո՛, սպանիական աչքեր կան, ինչպէս անգլիական ... ստերը: Կ'երեւտկայեմ որ այդ օրիորդը ո՛չ բարձրահասակ է և ո՛չ կարճ, միջակ գիրութիւն մը, բարեձեւ, վերջապէս աղջիկ մը գեղեցիկ, այս բառին իմ հասկցած առմամբ:

Նոյնպէս Պէտերիս անուան համար: Այդ Պէտերիսն ալ պէտք է անպատճառ ցորենի գոյն մազեր ունենայ, քիչ մը բարձրահասակ, աւելի նիհար քան թէ գէր, կապոյտ աչքեր՝ նուշի ձեւով կտրուած, կարմիր շրթներ, այսինքն այնպէս մը ըլլայ որ թրամուռէյին մէջ երբ դիմացդ նստի՝ քովինիդ ըսես.

— Ոտքդ պազենեմ, աս ի՞նչ աղուոր աղջիկ է:

Այսպէս եթէ ամէն անուններու յատուկ գրոշմը ձեզ պարզելու ելլեմ, ծայրը չգար. և վերջապէս չեմ կրնար պահանջել ձեզմէ որ ինձ նմա մի եւ նոյն պայմաններու տակ երեւակայէք Ռօզա մը, Էվելին մը, Հայկանուշ մը, Բոլանթի մը, Համբարձում մը, Բարսեղ մը մանաւանդ, Իրմա մը ևլն. ևլն.:

* * *

Հիմա դառնանք Առմանիս:

Մեր գրասենեակը, — այս մերը առնելու է ինչպէս կ'առնէք մեր աշխարհքը ըսած ատեննիդ: Դուք ձեռ աշխարհքին մէջ այնքան մաս ունիք որքան ես մեր գրասենեակին մէջ Սիմոն աղա անունով հաւաքիչ մը ունէինք:

Այս պատուական ծերունին մանչ զաւակ մը ունի եղբր Առման անունով: Օրն ի բուն այդ Առմանին նկարագրութիւններովը կ'ողողուէինք: Առմանը սանկ, Առմանը նանկ, Իրենց թալլին մէջ մէկ հատիկ է եղբր. ճուրի պէս ֆրանսերէն գիտէ եղբր:

— Տեսնա՞ք նէ պիտի հաւնիք, կ'ըսէր ու կ'երթար Սիմոն աղան:

Ես ալ իմ կողմէս խիստ նպաստաւոր գալարար մը կազմած էի այդ տղուն վրայ:

Չեմ գիտեր ո՛ւրկից ուր, այդ անուանը լսածիս պէս Տիւմային Առմանը միաքս կուգար. Առման Տիւվալը և ոչ թէ Պիննէմէձեւանին Առմանը: Իրաւ, չէի սպասեր այդ Մուսալլացի Առմանէն Մարկուիթի սիրականին չափ ո՛չ նրբութիւն և ո՛չ ալ աշխարհկութիւն: Այսու հանդերձ կ'ակնկալէի որ Սիմոն աղային տղան սիրուն երիտասարդ մը ըլլար դեղին նուրբ մօրուքով, բարեձեւ, աղուոր գլխի մը վրայ բանիմաց աչքերով, ինքնավստահ շարժուածքով, չըսեմ ֆրանսական՝ գոնէ եւրոպական վայելուծեամբ հագուած, բարեկիրթ, աշխոյժ և բանխրուն:

Առման մը ուրիշ պատկերի տակ ներկայացնել կարելի չէր ինծի:

* * *

Երէկ 16 տարեկան պատանի մը մեր Սիմոն աղան փնտռելու եկաւ:

— Նստէ, հիմա կուգայ, ըսինք իրեն:

Նստաւ, ճիշդ դիմացս: անծանօթ էր ինծի այդ դէմքը, և քնականաբար հետաքրքիր ակնարկ մը նետեցի վրան:

Չոր, վտիտ, տոգոյն, ծնելուն զղջացած մօրուքով, մարած աչքերով, ցցուած այտերով, անսահման բերանով, ահա ինչ որ մէջտեղ կը հանէր խոշոր գլուխ մը:

Աթոռին վրայ կարծես ասեղներ միած ըլլայինք, այնքան անհանգիստ էր անոր վրայ: Երկուքուկէս մատ կարճ բանթալոնին տակ սրունքները մշտնջենական շարժման վրայ շատ տգեղ գաղափար մը կուտային մեզի:

Բանթալոնէն երկու մատ վեր բալթոն կը վերջանար, որ պատանքէ մը զանազանուէլու համար՝ սեւ էր գոյնով. վերէն վար մէկ մկրասով կտրուած բալթօ մը որ ոչ սկիզբ ունի և ոչ վախճան:

Կարծեմ, փողկատ մըն ալ ունէր, որուն գոյնը աւելի օձիքին վրայ կ'երեւար քան թէ նոյն իսկ իրեն:

Վերջապէս երիտասարդ մը այնքան չիք, որքան որ կրնայ ըլլալ ... ընձուղար, ի՞նչ:

Ոտքերը դիտելու վրայ էի, Սիմոն աղան ներս մտաւ:

— Ծօ՛ Առման, ի՞նչ կայ:

— Աղապա՛, տուտուս լաքէրտա կ'ուզէ կոր տէ ...

... ..
Առման մի ... Կիրակոսն անգամ շատ չը պիտի ըլլար:

Թ. ԱԼՓԻՍԵ

ԳԻՉ ԽՈՍ, ՊՈՂԱՋԱՎԵՐԱԿԱՆ

ԽԱՎԵԱՐԸ

Ծովն շտրկում սեղանի մը վրայ իր սեւ գոյնովը հանդերձ ամենուն ուշն ու ուրուշը գլուռող սեւ խավեարին վրայ շատեր պատառաքող շարժած են և կը փափաքին շարժել անոր ակնորժամ և անդարար կրկնակ յատկութիւններուն համար, բայց մէկը գրիչ շարժած է մինչեւ հիմա անոր պատրաստութեան եղանակին վրայօք:

Անա ոյգ պահան է որ կուգամ լրացնել «Հանրագիտակ»ի էջերուն մէջ, յուսալով որ փափկահաշակ ընթերցողներ ինչ ակնորժով որ կուտեն՝ նոյն ակնորժով պիտի սիրեն կարդալ անոր պատմութիւնը իր գիտական բուլետեն մէջ:

Փրանսացի ճամբորդ մը, որ Աստրախան այցելած է, այդ համեմու պատուական տեղիքին նուիրած է ընդարձակ յօդուած մը, ուսկից շատ շահեկան տեղեկութիւններ կան քաղելիք:

Աստրախան, Վոլկա գետին վրայ, կեդրոնն է աղած ձուկի և խավեարի պատրաստութեան և վաճառականութեան: Երկրի համար հարստութեան մեծ աղբիւր մըն է Վոլկան իր անհամար ձուկերով:

Վոլկայէն ելած ձուկերը երկու մեծ դասակարգի կը բաժնուին. կարմիր ձուկ և ճեւմակ ձուկ: Կարմիր ձուկերն են թառափի (մերսին) չորս տեսակները, որոնք կ'որսացուին Վոլկա գետին և Կասպից ծովուն մէջ, և որոնց մեծ տեսակները մինչեւ երեք-չորս մէթր երկայնութիւն կ'ունենան: Այս խոշոր թառափներուն մէջ կան որ այնչափ խոշոր բերան մը ունին որ մարդ մը զիւրաւ կրնայ մէջը մտնել. բայց այդ ձուկերը անպաշտպան են՝ տկուայ չունենալուն համար, և իրենցմէ վախցուելիք միակ բանն է պոչի հարուած մը, որով կրնան մարդ մը գետին տապալել և սրունքը կտրել:

Բուն խավեարը կարմիր ձուկէն կ'ելլէ:

Ճերմակ ձուկերն են վիթխարի ծածաններ, տամնէն տամնընդ լիպրանոց գալլաձուկեր, իրաչալի խեցգետիններ որոնք մին-

չեւ 25 սանթիմէթր երկայնութիւն կ'ունենան, և այլն:

Տեսնենք հիմա թէ խավեարը ի՞նչպէս կը հանեն այդ ձուկերէն:

«Աւազանին շուրջը մէկ քանի հողի կը սպասէին՝ կեռերով, պարանոցներով և փայտէ լախտերով զինուած: Կեռերուն օգնութեամբ, ձուկը բռնեցին, աւազանին եզերքը բերին, և, անոր ցնցումներուն և պոչի ուժգին հարուածներուն հակառակ, ջուրէն դուրս բռնեցին գլուխը: Փորի վրայ պառկած մարդ մը լախտի մէկ քանի հարուած իջեցուց ձուկին գլխուն: Թառափը, ընդարմացած, ջրէն դուրս քաշուեցաւ չուանով մը զոր մարմինն բոլորովը անցուցին, և տախտակամածին վրայ պառկեցնելէ յետոյ, լախտի հարուածներով վերջնապէս սատկեցուցին: Անհաւատալի է թէ այդ անասուններուն հոգին ի՞նչչափ զգուար կ'ելլէ:

«Յետոյ թառափին փորը ճեղքեցին, մարդ մը ձուարանը դուրս հանեց և մազի մը վրայ դրաւ: Յետոյ ապկիւած երկաթէ աման մը առաւ, վրան գոցեց բարակ մաղով մը, ձուարանը մէկ քանի կտոր ըրաւ և սկսաւ կտորները մաղին վրայ չփել: Հաւկիթները դիւրաւ կը բրդէին և մարգարիտներու պէս ամանին յատակը կ'իյնային: Խավեարը այսպէս բոլորովին կ'ազատի զինքը չրջապատող թաղանթներէն: Գործողութիւնը բաւական երկար տեւեց, որովհետեւ անասունը խոշոր էր և 24 քիլօ խավեար կը պարունակէր:

«Հարցուցի վաճառականին թէ ի՞նչպէս կը հասկնար որ թառափ մը հաւկիթ ունէր:

— Ատկից պարզ բան չի կայ, ըսաւ, և ինծի ցոյց տուաւ երկար ասեղ մը, որուն մէջ խոռոչ էր: Հասկնալու համար թէ թառափը խավեար ունի՞, այդ ասեղը ձուկին փորը կը խոթեն. եթէ հաւկիթ ունի, խոռոչին մէջ կը մնայ:

— Բայց եթէ չունի, անասունը պարսպ տեղը կը սատկի:

— Չէ, անասունը չի նեղուիր ասկից, որովհետեւ ասեղը ոչ մէկ կ'ենսական գործարանի կը դալի: Ես երկար ասեւն պահած եմ ձուկեր՝ որոնք այդ գործողութիւնը կրած էին, առանց նեղուելու»:

Ամէն գոյնէ խավեար կայ, սեւէն մինչեւ

ձերմակը: ձերմակը ամենէն յարգին է, կը կոչուի (ծարսփայա իբրա), և շատ հազուադիւս է. ընդհանրապէս, աւելի կամ նուազ մութ բաց գոյն մը ունի. նոյնպէս, ձերմակով պիտակուած գորշագոյն խավեար կայ, որ շատ ակնանածոյ է: Սովորական թառափին խավեարը լաւագոյնն է, խոշոր թառափին խավեարին չափ բաց գոյն չունի, բայց աւելի նուրբ է:

Խավեարը առանց աղի կ'ուտուի, կամ թէ շատ քիչ աղ կ'աւելցնեն վրան պակսեցնելու համար անոր բնական անհամութիւնը: Այդ պարսպային, աշխարհի ամենէն փափկամ ուտելիքներէն մէկն է: Դժբաղդաբար, այդ առանց աղի խավեարը միմիայն արտադրուած տեղը կ'ուտուի, որովհետեւ չի պահուիր: Բեզբապուրկի, Մոսկուայի և Ռուսիոյ մեծ քաղաքներուն մէջ սակայն կը գտնուի այդ անի խավեարը, բայց պէտք է սառուցով շրջապատուած և ամենէն արագ ճամբաներով խրկել զայն: Շատ սուղ և շատ քիչերու մատչելի աղանդեր մըն է: Նուրբ համ մը ունի, ոտորէի փափուկ թարմութիւն մը, նիւնալի համ մը և կակղութիւն մը:

Թարմ խավեարը ո եւ է նմանութիւն չունի աղած խավեարին հետ որ ամէն տեղ կը գտնուի և կ. Պոլսոյ մէջ մեր կերածն է. իսկ ճնշուած խավեարէն մզոններով հեռու է:

Աղած խավեարը կը պատրաստեն հարիւրին քսանըհինգ աղ աւելցնելով վրան. լեղի մօտ համ մը ունի, յաճախ ձկան իւղի համ մը որ վարժ քիմքերուն միայն հաճելի է:

Գալով ճնշուած խավեարին, որ աւելի ներկի կը նմանի քան թէ ուտելիքի, զայն ձեռք կը բերեն հաւկիթները պահելով սալամուրայի մէջ, յետոյ ուժով մը ճնշելով երկու տախտակներու միջեւ: Այդպէս պատրաստուելով, երկար ատեն կրնայ դիմանալ:

Ֆրանսացի ուղեւորը կը պատմէ իր այցելութիւնը Օրէշոֆի համալսարանը գործարանին, որ Վոլկայի միւս եզերքը կը գտնուի:

«Շոգենաւին վրայ այլազան ամբոխ մը կը գտնուի. մորթէ կրկնոցներով և մուշտակէ գտակներով թաթարներ, կարմիր շապիկներով և երկայն մոյկերով Ռուսներ, Գալմուքներ, Քըրկըզներ, Վրացիներ, Պուխարացի-

ներ, ամէն ցեղերու ներկայացուցիչները կան:

«Շոգենաւը 20 վայրկեանէն կ'անցնի գետը որ երկու քիլոմէթրէն աւելի երկայնութիւն ունի Աստրախանի և Ֆարաուդի միջև, որ դետին աջ եզերքին վրայ մեծ գիւղ մըն է: Անոր մօտ է Օրէշոֆի գործարանը, որուն մօտ ըլլալը արդէն հասկցած էինք ջրին վրայ լողացող փամփուշտներէն և ձուկի կտորուանքներէն:

«Օրէշոֆ տունը Աստրախանի ամենէն կարեւոր տուններէն մէկն է. տարին 8 միլիոն քիլօ աղած ձուկ կը ծախէ, և մէկ ամսուան միջոցին իր հինգ ձկնարաններուն մէջ բռնած էր 23 միլիոն վոլլադ: Վոլլադը ձերմակ պղտիկ ձուկ մըն է զոր կ'աղեն և կը չորցընեն: Չմուր, մանաւանդ օրթոտոքս եկեղեցիին երկար պահքերուն միջոցին, գիւղացիին սովորական ուտելիքն է ան:

«Ձկնարանին մէջ մեծ ոգեւորութիւն կը տիրէր: Հարիւր մէթր երկայնութեամբ տախտակէ քարափի մը վրայ, ձուկերու լեռներ կը բարձրանային. մինչեւ բերաննին ձուկով լեցուած նաւեր կը հասնէին միշտ, և մարդիկ թիւերով զանոնք քարափին վրայ կը նստէին:

«ձերմակ տաքատ ու ձերմակ չապիկ հագած, գլուխնին գունաւոր թաշկինակ մը կապած և մինչեւ ծունկերնին մայկեր հագած երկու հարիւրի չափ կին, փայտէ նստարաններու վրայ դիմացէ դիմաց նստած էին: Մէկ կողմէն ջրէն ելած ձուկը կ'աւանդէին, կարճ ու լայն սայրով զանալով մը կը քերթէին, փորը կը բանային, հաւկիթները նրստարանին վրայ դրուած փայտէ գոյլի մը մէջ կը լեցնէին, և աղիքները ու փամփուշտը դետինը դրուած ուրիշ ամանի մը մէջ կը նստէին: Մարդիկ այդպէս մաքրուած ձուկերը կ'աւանդէին կը տանէին և տախտակներով ծածկուած մեծ փոսի մը մէջ կը նստէին: Հոն, վոլլադը հինգ օր կը մնայ աղի մէջ. յետոյ անկից կը հանուի, և չորս կողմէն բաց տաղաւարի մը ներքեւ կը կախուի, ուր ստանը հինգ օր կը մնայ արեւուն և բաց օդին:

Բանւորներուն մեծագոյն մասը Քալմուք են: Ամէն տարի, գարնան, երբոր Վոլկայի սառույցները կը հալին, հաղարներով կը հասնին իրենց երկրէն, և ամբոսն համար ձկնա-

բաններուն մէջ կը վարձուին. յետոյ, դեռ գետը չսառած, իրենց գիւղերը կ'երթան և ձմեռը կ'ապրին իրենց ամառուան աշխատութեան արդիւնքով: Շատ գործունեայ և շատ չարքաշ են: «Առանց Քալմուքի, գործէն քաշուէ» կ'ըսէ տեղական առած մը: Կիները օրական 13 ժամ կ'աշխատին, և 40 կոպէկ կ'առնեն, բայց երբեմն իսկ մինչեւ մէկ ռուպլի կը ստանան: Ոմանք ալ հազար ձուկը 60 կոպէկի իրենց վրայ կ'առնեն, և ճարտար բանւորութիւնները օրական մինչեւ 3500 ձուկ կրնան ստիկել:

Ձուկերը ուռկաններով կ'որսացուին, որոնք շատ խոշոր են: Ուռկանները պատըռտելու աստիճան կը լեցուին ձուկով: Մայիսի սկիզբը մանաւանդ, երբոր բինկան Կասպից ծովէն վեր կ'ելլէ դէպի գետը, որսը հրաշալի կերպով առատ է: Մի միայն Աստրախանի սահմանին մէջ, 250 միլիոն ձուկ կ'որսան, և Սարոմիքով տունը ինքը միայն 80 միլիոնէն աւելի: Մէկ քանի պաշտօնական թիւեր. 112,000 թօնօ բինկա կ'որսան, 57,600 թօնօ վոպլադ, 30,000 թօնօ կարմիր ձուկ և 64,000 թօնօ ուրիշ ձուկեր:

Կարմիր ձուկերն ալ կ'որսացուին ուռկաններով կամ կեռերով: Ձմեռը ծակերու մէջ կ'ապաստանին և իրարու վրայ կը դիգուին: Ձկնորսը գիտէ այդ ապաւէնները, սառոյցին վրայ ծակեր կը բանայ, և կեռով կը շամփրէ զանոնք:

Խավեարը հանելէն յետոյ, թառափը երկուքի կը ճեղքեն, աղի երկու խաւի մէջ կը դնեն և վեց ամիս կը պահեն, յետոյ կը հանեն, կը չորցնեն, կը ծախեն և ա'լ ամէն կողմ կը զրկեն:

Այդ կարմիր ձուկերուն վրայ բան մը չի կայ որ չչափազործուի: Անոր ողնայարը կը չորցնեն, և անով է որ կը պատրաստեն վեզիքը, այսինքն համեղ դոնդողը որ եփած ձուկերուն բոլորտիքը կը գրուի: Նոյնպէս անոր լողալու փամփուշտներէն ձուկի խէժ կը պատրաստեն: Ինչպէս կը տեսնուի, Վոլկայի ձուկերը ճշմարիտ ոսկիի հանք մըն են երկրին համար:

Փարգմ.
ՍԻՐՈՒՆ

ՍԻՐՏԵԱՌՆՈՒՈՒՔՆԵՐ

[ԱՂՏՈՏ ՖԱՆԹԶԻ]

— Տիկին մը, որ կռնակի փեռմե-ծիւքերը մոռցած ըլլալով կոնկէլ սակէն հագած պատմա գիշերնոցին ծայրը դուրս ինկած ըլլայ:

— Օրիորդ մը, որ մոռցած ըլլալով ժառըքիեռները, գուլպաները պօքերուն վրայ կ'իյնան:

— Օրիորդ մը որ ներմկցնող փրկարար փոշին՝ բուռն, անապարանոք փուլած ըլլալուն համար սեղ սեղ լաբ-լաբ ծեփուած կ'երեւայ:

— Միւսիւ մը, որուն պէխերուն վրայ ի հանդէս կ'ածուին այն կարգի արտադրութիւններէն՝ զորս քաշկինակ մը միայն կրնայ սանիլ:

— Էրիկմարդ մը, որ զլուխը ներմակ ուսկուծա մը դրած դիմացի սան սիկինին հետ փոխք կ'ընէ:

— Սպասուհի մը, որ անուշ հրամցուցած ասեն՝ հարբուխի հետեւանոք փրէն բըփ բըփ կը կարէ:

— Խոհարար մը որ բոնֆայէ վերջ, աղամի քաշկինակներէն կը գործածէ:

— Տասն եւ ուրբ սարեկան շիֆ օրիորդ մը, որ սակէն ֆանելա մեղաց տպարակ կը կրէ:

— Տիկին մը՝ որ խօսած ու խնդացած ասեն, ակռաներուն մէջէն ցոյց կուտայ սեղ սեղ... մայսանոսի քերքիկներ:

— Օրիորդ մը, որուն հետ պարած ասենդ սուր ֆրսիմֆի մը հոսք՝ սրդողածի պէս դեմֆդ ակամայ հեռուն բռնել կը հարկադրէ:

L.

Դռնապան մը գիշերանց կ'արթնցնէ իր կիներ:

— Կնի'կ, կ'ըսէ անոր, սանդուղին վրայ ոտնաձայններ կը լսեմ, ելիր, կարծեմ գող է:

— Ով կ'ուզէ ըլլայ, կը բաւէ որ կոշիկները լաւ մը սրբած ըլլայ, կը պատասխանէ կինը կիսովին արթնցած:

ՉԵՄ ՈՒՉԵՐ...

Չեմ ուզեր սիրել սիրով մ'անսահման,
Որ չը կերցնեն վերջն ալ ինձ ... Սամսոն :

Չեմ ուզեր ընել մարդու շատ պատիւ
Որ չը վարձատրեն վերջը զիս ... փայտի :

Չեմ ուզեր ըլլալ շատ բարբաժ հարուստ,
Որ բարեկամի շատ չընեն կորուստ :

Չեմ ուզեր երբեք մարդ զիս գովէ,
Որ վերջն ալ չըսէ ... ի՞նչ ապուշ կով ե :

Չեմ ուզեր մարդ զիս գովաբանէ
Որ չըսէ ... ո՞նի ինչ անբան ե :

Չեմ ուզեր նայիլ կրնոջ երեսին
Որ չըլլէ ըսէ վերջը իր կեսին :

Չեմ ուզեր երբեք հագուիլ ապառիկ
Որ փողոցները չըլլան բափառիկ :

Չեմ ուզեր կնկան հետ ընել զօռքե
Որ վերջն ալ նա զիս հաւու պէս մորթէ :

Չեմ ուզեր կնկան ընել ես դարպաս,
Ձի արգիլեց զայդ ինձ աղա պապաս :

Չեմ ուզեր դպչիլ կնոջ հրեկին
Որ չը հանդիպիմ անհամ ֆօքսկին :

Չեմ ուզեր ըսել մարդու խառնախառ,
Թերեւս հանդիպիմ մեկու մը ախառ :

Չեմ ուզեր մարդէ առնել փոխ դրամ,
Ձի վերջէն տալու չեմ ընէր մերամ :

Չեմ ուզեր երբալ ես պարահանդես,
Ուր կնայիներ կան աստ անդ դեզ դեզ :

Չեմ ուզեր երբալ ես այն զօնսէր,
Ուր միտքս կ'աւրէ գեղեցիկ սեռը :

Չեմ ուզեր տեսնել երբեք այն միտք
Որ վերջը չըսեն իմ ալ խառք միտք :

Չեմ ուզեր որ զիս կիները յարգեն
Եւ ոչ ալ վերջը ընեն ինձ հետ քեն :

Չեմ ուզեր ըլլալ ես սիրոյ գերի
Որ վերջը չըլլամ հայտ թու կերի :

Չեմ ուզեր հաւատալ կնոջ
Երբ նոյն իսկ ինձ շատ առջ :

Չեմ ուզեր տեսնել կնոջ արցունքը,
Ձի կը բոցնեն խելիս ... բարձունքը :

Չեմ ուզեր տեսնել կին մը մոլորած,
Ձի իսկոյն կ'զգամ աղիս ոլորած :

Չեմ ուզեր կնոջ ընել բաց կասակ,
Որ չը հաշակեն շառաւառի ապակի :

Չեմ ուզեր տեսնել կինն աշօք ծաւի,
Ձի անմիջապէս փորս կը ցաւի :

Չեմ ուզեր ըսեն ինձ՝ խուշո հոգիս,
Ձի այն աստե՛ն տէր չեմ ըլլալ կամֆիս :

Չեմ ուզեր որ զիս հրաւիրեն պարի,
Երբ կոտորի կոխեն սիրս կը մարի :

Չեմ ուզեր երբեք կնոջ սիրս բանալ,
Որ անկէ անցնի նա զերթ մի ֆանալ :

Չեմ ուզեր երբեք տալ հոգի կնոջ,
Որչափ որ ալ նա խաղցնէ իր պոչ :

Չեմ ուզեր երբեք անցնիլ այն կիներն,
Որ ինձ կը զոհէ իր կեանքի գինն :

Չեմ ուզեր որ ինձ ըսեն հապանի,
Ձի չեմ նմանիւր այնպէս մի բանի :

Ինչ որ չեմ ուզեր ըսի լըմնցաւ,
Ձի չեմ ուզեր ձեզ առքել գլխու ցաւ :

Պօստորազուրիւն ինձ պարտ է սեպուհ,
Եւ բող կոնակէն նաքի ներշնչուհ :

ԵՐՄՈՂ.

Ամբակում շատ ազատ է .

Օր մը կ'ըսէ իր մէկ բարեկամին .

— Աղջիկս խմբագրի մը չափաւ տամ,
որովհետեւ խմբագրիները թուղթին միայն
մէկ կողմը կը գրեն : Իսկ բանաստեղծի մը,
երբեք, որովհետեւ անոնք ամբողջ տողն ալ
չեն գրիր :

DES COUTURIÈRES

Պաշտոնական պարահանդես մէջ Bal des couturièresը, որ տարւում այս եռուդեռեկանակին շուրջ կրնայ համարուիլ իր չիք կազմակերպութեամբը՝ որուն նմանը կարելի չէ վայելիլ ուրիշ նմանօրինակ պարահանդեսներու մէջ:

Ճորտներէն դրի վերնագիրը, ճիշդ անուշաւք, որովհետեւ իր կազմութենէն, հանած համբաւէն և չիքութենէն շատ բան պիտի կորսնցնէր ան՝ երբ փորձէի հայացնել — հայեվարել պիտի ըսէր թէ ոգիկա — օրինակի համար «կար կարողներու» և կամ «fashionables» պարահանդէսը ...: Համմէ:

Կար կարողները ինչ կարողութիւն ունին այդպիսի չիք երեկոյթ մը կազմակերպելու...: Ասեղին տակ կիթոռ ու յոգնած, բազմին այդ զոհերը, որոնք հայր ասեղէն ու սէրը Բարսեղէն կը յղատն ու կ'ապասեն, ինչ նորութիւն և ինչ luxu կրնան յառաջ բերել ...: Այսպէս կարելի է մտածեն ամէն անոնք՝ որոնք կար կարողը կամ եւրոպական բառով, մօտիւթը օրվրա օրիորդ մը կամ երեք զաւակով որբուայրի մը կը ճանչնան, մէկ սակիի քօթիւմ թայիէօն, և քսան զրուշի գործածուած բէշ մը՝ պլուզ շինել տալէն անդին չեն անցած:

Սակայն ... պէտք է գիտնալ որ կան couturièresներ, որոնք ձերմակ գողնացով սպասուհի, պօնեկի մառմիքօն, և մէկ քանի հազարնոց ալ աման կը գործածեն (խնդրեմ չանախ չէօմէլէն չի հասկցուի):

Ահա այդ high class կար կարողներու անուան ձօնուած պարահանդէսն էր որ անցեալ շաբաթ գիշեր տեղի ունեցաւ Բերս, Բըրի-Շանի ձմեռնային թատրոնին մէջ, ի ներկայութեան ամէն ազգի բարձր դասուն, և ամէն անոնց՝ որոնք Այվալեանի երուսաղիմայ ուխտին պէս, տարին անգամ մը օտար կնոջ մը ձեռքը սեղմելու, մէջքէն գրկելու ու գլխէ կլկլէ զօտ աւանակարար ալ մէկ երկու ոսկիէ կլկա ու սովորութիւնը ունին, mal grai bon grai.

* * *

Պարահանդէսներու վրայ է՛ն վարպետ զաւեշտագիրէն բռնէ ան սրամիտ երգիչ ծաղնը՝ գէշ ազգի բան մը գրած են մինչև և մեր օրերը, ինչպէս մեր ծաղնը — Բաւ լիցի ...:

Ամէն տարի պարահանդէսը կ'ունենամ երեք շաբաթէ մը շուրջ, որովհետեւ իւր իւր նկարագրով տարբեր է սիւն մը ներքին կիանքը, իր չիքը և անոր փոփոխութիւնը (փոփոխութիւնները չի համարուիլ որոշ վրայ կ'ունամ չի վճարող բաժանորդներու համար ...):

Այս անգամ պատիւը ունիմ գծել հոս պատիւը մը՝ որ իր տեսակին մէջ նոր է, իրական և քրքշալի:

Վայրը, ուր կ'անցնի այս իրական պատմութիւնը Բըրի-Շանի թատրոնն է, օրը շաբաթ, ժամանակը գիշեր, թուականը 27, Յունուար, տարին 1907:

Պատմութիւնը չ'սկսած, չեմ գիտեր ըսի թէ ոչ, այս bal des couturièresին ընդհանրապէս կ'երթան զբօսնուլ քիչ շատ ծանօթ գէմեր, ամուրի, ամուսնացեալ և այն ամէն նիւմէնօններէն՝ որոնք այս երկու զաւակարէն դուրս կ'ապրին:

Ժամը գիշերուան չինգը կ'անցնի: Նուազածուաց խումբին հեշտօրօր մէկ վալսին հետ անհամար զոյգեր՝ որոնց շատը իրար չեն ճանչնար, քոյր եղբորմէ մը աւելի սերտիւ փարած իրարու՝ կը դառնան ու կը դառնան, որը նշանածը, որը կինը, որը ծնողքը և ումանք նոյն խիզ զաւակներնին մոռցած խեղացնար:

Օթեակներէն մէկուն տակ, խալութիւնն ու արքատեան սոխակութիւնը կեցուածքէն մատնող 45էն 50 տարեկան քաւսիթոյ մը ապուշ ապուշ կը դիտէր պարող զոյգերը, ու բերնին երկու կողմէն ջուրեր կը վազէին, այնքան փափաքող էր վայելիլ այդ կիանքը, այդ անուշութիւնը, առանց նկատի առնելու ... իր ապուշութիւնը:

Եւ որովհետեւ գոնէ մասեկով մը դէմքը ծածկելու նախազուշութիւնը ընելու, բեր-

տա՛ի սուաթ թաշով չառիս սուռաթը տնկած էր անսարքեր, ուստի ծանօթ երիտասարդ մը իրեն ժտենալով,

— Օ՛... Վիշէն աղա՛... սիւ պալօտա՛... հէմտէ Բուքիւրիէն պալօտընա՛... հէ՛... —

— Նէ՛ վար ըմբշ, սիւ գօնթաթլը տէյիլ սինիզ եա... չօգ չէյ... Նէ չաշկըն չաշկըն եիւլիւմէ պազըեօրսա՛ն... —

— Եօ՛ք... տանքի, սիւլի հիշ կեօրաթլ-յիւմ եօրսը՝ տա՛... թօնաթըմա կիթաի... էյ նաաը պիր տամա պուլտուը՛գ մը... —

— Տուր պապալըմ, էլէ կէլիւլէր հէփսի միւշտէրիտէ... —

— Վա՛յ... տա՛նա տա էտէճէքսինիզ... —

— Ծօ Նէ տէմէք տիւր... սա տ քիմ տէտի քի Վիշէն էնթիլէ գուլթուընը ճէպին-տէ կէզիօր տէյի... չօգ չէյ... էտէրիմ ա՛... —

— Փազաթ մտտամ տույարսա գառըշ-մամ... էլինտէն գուրթուլումաղսընը... —

— Կէօլիւմէ պազը՛յօրսըն... պազ պէն էօյլէ գապառալարա պըլըգ պուռանլարտա՛ն մըլըմ... գառը էվին քիւթլիւյի տիր, էր-քէք իտէ հալա տըր... կիր՛ը չըգար... —

— Հա՛, հա՛, հա՛, բէք թօնաթլաշմըշ-սըն պու աղշամ Վիշէն աղա, պարէ պիր տամա պու տա քատուի տէ սէնին իլէ վի-գալի օլալըմ... —

— Տուր պապալըմ չու ցատկեմճիլէր եօ-ուլտուէն քի պիլէ տէ բայ տիւշսիւն... —

— Վիզալիիզ հա՛... —

— Բէք էյի ամա, պօշ պօղալըգ իսթէ-մէզ ծօ՛ Միհրան, էվտէ քառըյա պիր շէյ սէօյլէմէ... —

— Ա՛... Ա՛... Ա՛... —

Շուաիկ երիտասարդը ուզելով լաւ խաղ մը ընել ու քիթէն բերնէն բերել Վիշէն աղայի աչք իրիկուան զրօսանքը կամ փաղ-ձուռքը, և որովհետեւ ընտանեկան յարաբե-րութիւն աւուանէ, կառք մը ցատկելով շի-տակ տունը կերթայ և գործը կնոջը հասկըցը-նելէ վերջ զայն կը համոզէ, սօմինօ մը հազ-նելով պարահանդէս գալ մօտէն տեսնելու համար իր տիպար ամուսինը, որուն աղ պըղ-պեղ մալերէն և լրջագոյն տարիքէն չէր յու-սար նմանօրինակ պարագաներ։

* * *

Սրահին մէջ ամէն ոք իր տամային թե-ւէն և... սրտէն կախուած չեմ գիտեր ինչ հոգեբանական և փիլիսոփայական խօսակ-ցութիւններով կը շրջագայէին քրտինք պա-ղեցնի ու համար, և շատեր — աւելի կուտ բռնող դասակարգէն — պիւֆէն մտած շամ-բանեայի, օռանժատի և գարեջուրի գաւաթ-ներով կ'ոռագէին իրենց նորածիլ զգացում-ները, մինչ Վիշէն աղա, մեր նիւթին հերո-սը, ձեռքերը գրգռնը, մահալլէ պէքճիսիի պէս կը պտտիւր, մէկուն ժպիտ մը, միւսին աչք-խըք մը նետելով, և որոնց վայ խըն-դա ու միայն կը պատասխանէին խեղճ մար-դուն, որ բարկութենէն կը ճաթէր։

Հաւատացէք, չեմ գիտեր ինչ սատկցնող սիրտատնում մըն է պարահանդէս մը գըտ-նուիլ զրօսնելու համար և փոխանակ զրօս-նելու ուրիշին զրօսանքը դիտելով բերնի ջուր վազցնել, աւանակարար... —

Ահա նոյն դիրքին մէջ կը գտնուէր մեր Վիշէնիկ աղան, ու երկու ժամ պտտիւլէ վերջ, դեռ թռուցիկ մասքէ մը չէր գտած, եթէ ոչ պարելու, գէթ երկու խօսք ընելու համար։

Մինչ այս մինչ այն քատուիին սինեալը կը արտի ու մեր խեղճուկ Վիշէնիկ աղան լէվին լէվին Միհրանիկը կը փնտտէր տամա մը ճարելու ու վի-գ-ալի ըլլալու տենջանօք։ Ե՛ւ։

Վերջապէս աչքին հանդիպեցաւ չիք տա-մա մը, որ Միհրանիկը խաճած կը պտտցնէր, իսկոյն անոնց մօտեցաւ ու,

— Հայտէ պազալըմ, գէվգէկիին եէրի եօգ... պիր աղ տա պանա վէր ծօ՛... այագլարըմա սու էնտի, տա՛նա հալէ կուս-տօլու պիր շէյ պուլումալըմ... —

Միւսիւ Միհրան քրտինքները սրբելով,

— Պէ ախպար, պէն պուլտում, պիր թանէտէ սէն պուլ, պէն պուլալարըն թիւճա-րը տէյիլիմ եա... չօ՛գ շէյ... —

— Ծօ՛, չան սուռաթ, սէ՛ իսթէտիլին վաբըթ նասըլ պուլուլօրսըն... ծնու պանա վէր տէ սէն չուչուռտանսըն, պիր թանէ տա՛նա պուլապիլիւրսին... ըսելով, քովի տամային թումպուլ և կանթէ ձեռքերը շո-շափել կ'ուզէ, քովէն մասքէին տակի դէմ-քին բռօնիլէն յառիշտակուած՝

— Է՛յ, պու լօգմայր սանա եռթուր-
տամ Միհրանիկ ... հաթըմ իչին պանա վէր
պէ՛ ... խըյանէթ ...

— Փէք էյի ամա, օլտո՞ւ մը պու եա՛ ...
ըսելով քովի տաման Վիչէն աղային կը
յանձնէ ու ինք կծիկը կը դնէ բազմութեան
մէջ։

Վիչէն աղա, որ մինչեւ այն ատեն, բա-
զում աշխատած և ոչինչ կալած կամ կըլլած
էր, ձեռք անցուցած Տիպաւ տամային գե-
ղեցկութենէն հրապուրուած խօսք կ'առնէ,

— Հանկը լիսանտան գօնուշուրսընըզ
մատմադէ՞լ ...

Մասքէին տակէն ձայնն ու ձեւերը փո-
խած Տաւր, շատ նուրբ ու հազիւ իմանալի
թօնով մը,

— Հայերէն կը խօսիմ ...

— Հա՛ ... իմ ուզածս, կուզե՞ս քի սանկ
քիչ մը նստիմք ...

— Ինչո՞ւ չէ ...

— Օ՛խ, թամ իմ խաֆայէս էս եղեր ...
ես ալ ցատկէմճի չեմ հէ՛մ ալ չեմ սիրեր ...

— Նոյնպէս ես ...

— Եկուր նայիմ, անուշ լան մը կերեւաս
կոր մասքէիդ տակէն ամա, ինչ գիտնամ ...
կըսէ Վիչէն աղա, որուն աչքերը երթալով
կուռնային։

— Չէ՛ք պարեր ... կը հարցնէ մասքէն
Վիչէն աղայի թեւը սեղմելով ...

— Ա՛ ... ա՛ ... խուշս, մէյմը երեսդ
բաց, ի՛նչ ըլլալդ հասկնանք տէ անկէ հո-
քը ...

— Անկարելի է ...

— Շատ աղէկ, ի՛նչ կառնէք ... իչկի
մը խմէ քի գլուխդ տիւմանդաշմիչ ըլլայ, ես
քու ըսածդ հասկնամ, գուն ալ իմին ըսա-
ծըս ...

— Օռանժատ մը ...

— Համմէ՛ ... քիչ մը բէք ըսէ, նէվա-
զիլ ես ի՛նչ ես, բէք կէնդէդ կը խորաթեւ
կոր ...

— Բօռթուգա՛լ ... բօռթուգա՛լ ...

— Հա՛ ... հասկցայ ամա, բօռթուգա-
լով բաղնիք կերթան, ասոր աստեղը պալօ
է, հոս խաղիթօլու բան մը խմելու է ...

— Գլուխս կը դառնայ ...

— Տահա աղէ՛կ ես, գլուխդ դառնայ

քի մինք ալ դառնանք, ինտոր քի աշխարհք
կը դառնայ կոր ...։ Ան չէ. ամա անունդ
ի՛նչ է ... խո՛ւշս ...

— Վերծին ...

— Կարգա՞ծ ես ... չէնէ աղապ ...

— Սո՛ւս ... երկու զաւկի ալ տէր եմ,
էրիկս քնացուցի ես դուրս ելայ ...

— Ծօ վա՛յ քէօթօլլո՛ւ ... կըսէ Վիչէն
աղա, պիւռային գաւաթը սնկելով ... էրի-
կըդ նէճի՛ է ...

— Սըմսար ...

— Վայ կիտի սամսար վայ քի, թալու-
խի մը հախէն չի կրնար կոր գար ...

— Ես քեզի բէք հաւնեցայ, կաւելցնէ
մասքէն, բէք անուշիկ մարդ ես ...

— Հէ՛, հէ՛ ... ձգէ քի ես ըսեմ ատ
լախըւորները, հրամանքդ ո՞ւր տեղացի
ես ...

— Բերայէն ...

— Ատոր չիւրէ չիգա՛յ ... չիւնքիւ պաշ-
խա տեղէ ըլլաս նէ էրիկդ եաթախը չես
ձգեր տէ գար ...

— Ներեցէք, հրամանքիդ ո՞ւրկէ էք ...

— Բերայէն եմ, տողմա պէօյիւմէ ...

— Կարգա՞ծ էք ...

— Ան թառափները մի հարցնէր ...

— Անոր համար կընիկըդ տունը ձգեր տէ
հոս ես եկեր ...

— Ի՛նչ ալ աղուոր թաթիկներ ունիս ...
կըսէ Վիչէն աղան, չրթունքը մօտեցնելով։

— Չէ՛ ... ատ չեղաւ, էրիկս ետքը ...

— Ատամ, ան հիմա քիմ պիլիբ որ քիւ-
մէսին մէջն է ...

— Ինչո՞ւ քիւմէսը ըլլայ ...

— Ես սամսար է չըսի՞ր մի ...

— Սամսար չէ՛, սըմսար, սըմսար ...

— Ի՛նչ հայվան է նէ ...

— Հայվա՛ն ... կըսէ մասքէն բարկու-
թիւն կեղծելով ...

— Հէ՛մ ալ էշէ՛կ է եղեր քի, աւանակ-
ներու պէս քնացեր է տէ, քեզի պէս բիլիճ
մը օւթան է ձգեր ...

— Ըսել է իմ ամուսինս ... աւանակ
է ...

— Աւանակին ալ պուշուղլուն ...

— Շատ աղէկ, ձեր տիկինը չի՞ խօսիր,

երբ դուք ասանկ հանրային վայրեր կուգաք ժամանակ անցնել:

— Թամամ, սերսէմը ինչ ֆառզին պիտի երթայ ... հիմա ան իքինճի քունը կը քաշէ կոր ...

— Շատ լաւ, եթէ վաղը իմանայ որ դուք ուրիշ կնկան մը հետ ժամանակ էք անցուցեր ...

— Ան քու գիտցած խուռնազներէդ չէ ... ֆառզին պիտի չերթար, էշուն կտորի մէկն ալ ան ...

— Այս հաշուով իմ ամուսինս ձեր տիկնոջ պիտի յարմարին եղեր ... ու ...

— Հասկցայ, սանքի մենք ալ իրարու, հէ ... էյ շէքէր շէյ իմիշտին մատամ, ամա երկրիւնիւ աչմայօրսն ...

— Հիմա ժամանակը չէ, երբ միտսին դուրս ելլանք, այն ատուն կը տեսնաս ...

— Ծօ', դճուրս ալ պիտի ելլանք ... չիտի չըլտըրածաւրմ ... Ծօ' Միհրանիկ, պու կէճէ գուշընը նէրտէն պուլտըն ... ըսելով երբ վաժաշոտ ձեւեր մը առնել կուգեր հանդէս իր տամային, յանկարծ միւսիւ Միհրան վրայ կը հասնի,

— Էյ Վիչէն աղա, ալթըգ տամամը վէր, չօգ օլտը ... աէյիլ մի եւ ...

— Ծօ', շա'ն սուռաթ, պու նէ մաթահ ըմըշ, նէրտէն պուլտըն ... Ծօ' պու շէքէր շէյ ...

— Եւ ... պէն պայաղը տամալարա գուլադ ասամամ ... ամա ելվէրիր, արթըգ թէսլիմ էթ ...

— Ո'չ, ո'չ, միւսիւ, ես ասոր հետ պիտի երթամ, արդէն քունս ալ եկաւ ...

— Ծօ' չինտի չըլտըրածաղըմ ... Միհրիկ, այաղընը էօքէյիմ, պիգիմքինէ պօշ պօղազլըգ էթմէյէսին, պէն ալըպ կիտիյօրըմ ...

— Օլմազ Վիչէն աղա, կիւնահ իչէմիշ օլուրսն, սէն էվիլ ատամսըն ...

— Ծօ' շաշկըն, պուտա էվիլ իմիշ, քէօռ քէօռա ճըռթ տէմիշ ...

— Սէն պիլիրսին, Վիչէն աղա, կիւնահը պօյնունա, ըսելով գիրենք կը ձգէ կը բաժնուի, մինչ մեր յիսուննոց խօֆածը գետնէն թանկագին աղամանդ մը գտած ըլլալու յոխորտանօք թեւը կառնէ տաման և երկուքը մէկ կը մոկնին պարահանդէսէն, մինչ տաման ականջն ի վար,

— Կառապանին ատրէսը ես պիտի տամ ...

— Դուն տուր խուշըս ... արեւդ սիւրեմ պիւլպիւլս, կըսէ մարդուկը, ու մինչ ինք կառքը կը նստի, տիկինը իրենց տան ատրէսը կուտայ ու ... կառքը կը սուրա՛յ (Ականջդ խօսի Շաթրեան):

* * *

Տրուած ատրէսին կառքը կը կենայ մուլթին մէջ, մինչ Վիչէն աղա, որուն գ ուլը չափէն աւելի տաղցած էր, առջի անգամ չի կռահեր թէ ուր է, և իսկոյն վար կիջնայ կառքէն, մինչ տիկինը գրպանի բանալիով դուռը բանալով

— Հրամանեցք Վիչէն աղա ... անկողինիդ պատրաստ է ...

—

Ալքովը ցնթած ու գինովի շոշորդը պահ մը անցետացած է Վիչէն աղայի վրայէն, երբ ինքզինքը կը գտնէ, բուն իսկ իր տանը մէջ, իր կնոջը հետ դէմ առ դէմ ...

— Գուզում Վիչէն աղա, կառապանին քառորդի տեղ ինկիլիդի ոսկի չի տայիր ...

—

— Սղէկ նայէ մէյ մը ... քեզի կըսեմ կոր ...

— Ես լուս տեղը, իմ կրնիկա ֆառիս չի կրցայ ընելու տէ, հիմա աս սէրսէմութենովս ոսկին չէյրէկէն պիտի զատեմ ... նամուսըս վրայ երթալէն ետքը, մէկ ինկիլիդին ոսկին ալ թող գացած ըլլայ ...

— Էյ ինտո՞ր էր նայինք աղուո՞ր էր տամա՞տ ... հա', հա', հա' ... պուլօն ինտո՞ր, հազ ըրիր ...

— Ես պալօ գացի նէ մինակա էի, ինտոր քի տեսար նէ, ֆախաթ հրամանդը չիֆթ եկար ... ասոր հաշիւը ետքէն պիտի տեսնանք ...

— Բէօռ քէօռա ճըռթ տէմիշ ...

— Էյի ամա, պազալըմ Դատաստանական ինորհուրդ նէ՞ տէմիշ ...

* * *

Moral. — Զբօսալի դուարձութիւններ կան և կամ այնպիսի կատակներ՝ որոնք տուն տեղ կը քրքրեն, այնպիսիներու կարգէն է նաեւ պարահանդէսը, որ ամէն տարի իր ետին կը ձգէ կարգ մը զոհեր, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ և ՆԻԻԹԱԿԱՆ:

ԼԻԼԱ

ԿԵՂԾ ԱՆՁՆՈՒԷՐԸ

Երեկոյցի մը մէջ տեսած էի զինքը: Ու այդ օրէն ի վեր որքան որ կը ներէր միջոցս, ասդին անդին դիմումներ կ'ընէի զինքը մօտէն ճանչնալու համար, բայց ի վեր:

Կիրակի օր մը Չէթիկեաննց տունը գացած էի տեսութեան համար: Խօսակցութեան միջոցին յանկարծ դուռը զարնուեցաւ, և քիչ յետոյ մեր նստած սենեակէն ներս մտաւ այն աղջիկը՝ որու: Ինքնութիւնը հասկնալու համար այնքան զուր ջանքեր, պարտաւ յոգնութիւններ ըրած էի:

— Բարի իրիկուն ձեզ:

— Բարի իրիկուն:

— Հրամայեցէք, օրիորդ, նստեցէք:

— Շնորհակալ եմ, պարոն:

— Կը ներկայացնեմ ձեզ, միւսիւ Սեպուհ ... , ընկերուհիներէս Օրդ. Ֆ. Միամիտեանը, և փոխադարձաբար Սեպուհ Ակոնեանը, խօսք կ'առնէ Անայիս, Չէթիկեանց աղջիկը:

— Ո՞ր կը բնակի օրիորդը, կը հարցնեմ Անայիսին, առիթէն օգտուիլ ջանալով:

— Ֆէրիտէ, Գաւանդ փողոց, թիւ 4:

Չեմ կրնար բացատրել այն ուրախութիւնը, զոր զգացի սիրականիս պաշտելի անունը հասնալովս:

Հիմա մնաց զինքը համոզել և անկէ rendez-vous մը խնդրելը: Ինչ որ սակայն բաւական դժուար էր:

Ժամը տասն և մէկին միջոցները, կը մեկնիմ ակամայ այդ տունէն, ապագայ սիրուհիս խորհրդաւոր «մնաք բարով» մը ըսելով:

Հետեւեալ առաւօտ կը մտադրեմ նամակով մը հասկցնել այդ աղջկան՝ զինքը սիրելիս, և թէ՛ միեւնոյ: ատեն rendez-vous մը խնդրել իրեն հետ առանձին տեսնուելու համար:

Նամակս ձեռքը հասնելուն՝ խնդրանքս չէր մերժած: Երկու օր ետք իրիկուան ժամը տասն և մէկին ինձ պիտի սպասէր Բանկալթի, ձէտիտիէ փողոց, իր ընկերուհիներէն Սաթնիկ Մանկիզեանին տունը:

Այդ իրիկունը՝ բնականէն շատ աւելի չիք,

կ'երկնամ գէպի որոշեալ փողոցը, ուր կը գտնեմ պաշտելիս, որ ընկերուհիին դրան առջեւ զիս կը սպասէր, «մնաք բարով Սաթնիկ» ըսելով՝ կուգայ քովս, և ճիշդ ժամի մը չափ կը տեսնուինք իրարու հետ:

Այսչափ:

* * *

Ինչպէս որ ամէն անձ մէկ կամ երկու մըտերիմ բարեկամներ կ'ունենայ, որոնց կը յայտնէ իր սիրային գաղտնիքները, նոյնպէս ես ալ ունիմ մէկ քանի մտերիմներ, մասնաւոր հատ մը, Սարգիս Կամկարեան, որուն գաղտնիք մը չունիմ որ յայտնած չըլլամ:

Ֆուլիկին խնդիրն ալ ծայրէ ի ծայր պատմած էի անոր, սակայն ինք՝ մեր իղձ մը ունէր խզելու, մերձայնքն իմ և սիրուհիս միջեւ գտնուած յարաբերական թելերը, ըսելով. «քանի որ ես քու անձնուէր ընկերորդ եմ, պէտք է ականջ տաս խօսքիս, ձեզ ես տա ֆուլիկը, չխօսիս անոր հետ, որովհետեւ կատարեալ եփեպսիզ և լկրտած աղջիկ մըն է: ան քեզի թէեւ երեսանց սէր կը ցուցնէ, սակայն ետեւէդ վրադ կը խնդայ, ասիկա աղէկ մը գիտցիր, թովմասին ալ անանկ բրաւ»:

Անպատճառ ամէն իրիկուն մէյ մը Սարգիսին հետ սիրուհիս դրան առջեւէն պիտի անցնէինք, ինքն ալ մեր ժամանակը գիտնալով՝ անպատճառ մեր անցնելուն պիտի սպասէր պատուհանին առջեւը:

Սակայն չեմ գիտեր թէ ինչ էր պատճառը որ ամէն անգամ զիս Սարգիսին հետ տեսնելուն՝ ներս կը փախէր, երեսս չէր նայեր ու չէր ժպտեր:

Օր մը դարձեալ կը տեսնուէի սիրուհիս հետ, «Ֆուլիկ, ըսի, ինչո՞ւ համար Սարգիսը քովս եղած ժամանակ ներս կը փախիս, սուրաք կ'ընես եւն»:

— Ախ, Սեպուհ, չեմ ուզեր որ ան սրիկային հետ մեր առջեւէն անցնիս, երկրորդ եթէ զիս կը սիրես՝ պէտք է որ անոր հետ չխօսիս, և ասիկա ինձ նկատմամբ քու սիրոյդ ապացոյցը պիտի ըլլայ:

— Կը ցուիմ որ շատ դժուար խնդիր մը կ'առաջարկես, պաշտելիս, ես ոչ թէ անոր հետ միայն մտերմօրէն կը խօսիմ, այլ եւ ամբողջ գաղտնիքներս յայտնած եմ իրեն:

— Ուրեմն ի՞նչ ալ ...

— Անշո՛ւշտ, սիրելիս ...

— Ըսել է զիս չես սիրեր կոր ...

— Ոչ թէ կը սիրեմ՝ այլ կը պաշտեմ, սա-
կայն ի՛նչ կրնամ ընել, երբ բոլոր բարեկամ-
ներուս մէջէն միտակ անիկա անկեղծ և անձ-
նուէր գտած եմ:

— Դուն զայն կը գովես, բայց անիկա
չես զիտեր թէ ետեւէդ ի՛նչ խօսքեր կ'ընէ
քեզի համար, անձնուէր ըսածդ ա՛ն է:

— Ո՛չ, օրիորդ, ո՛չ, շատ կը սխալիս,
ան իմ ետեւէս խօսք չընէր, և թէ ի՛նչ է
ըսեր:

— Ես այսչափ միտն կրնամ ըսել, դուն
հարցո՛ւր, փնտռէ ու կը հասկնաս ...

Այդ իրիկունը, դարձեալ բարեկամիս խա-
նութը կ'երթամ, օրուան մէջ ֆուլիկին հետ
խօսածներս իրեն պատմելու համար:

— Սեպուհ, կործեմ, դուն ատ աղջիկէն
վազ չպիտի կրնաս անցնիլ, կը պատասխանէ:

— Աղբար, ի՛նչ կ'ուզես ատ աղջիկէն,
ինչպէս որ քեզմէ չեմ կրնար բաժնուիլ, և
թէ ամէն իրիկուն քեզի անպատճառ անգամ
մը տեսնելու եմ, նոյնպէս ալ ֆուլիկին վազ
չեմ անցնիր և չպիտի անցնիմ ալ. սիրոս մի-
այն ատ աղջիկը սիրեց, ամօթ է:

— Չէ՛, բայց երբ հակառակ պարագային
խարուիս, ան ատեն միտքդ բեր թէ՛ ես
իրբեւ քու անձնուէր ընկերդ, կանխաւ ըսած
եմ ատ աղջիկին ինչ խառախաւսաւ ըլլալը,
յուսախարութեանդ պարագային վրաս չվա-
զես գանգատելու:

Վերջապէս, ֆուլիկին հետ խօսած ատենս
միշտ Սարգիսին խնդիրն էր որ մէջտեղ կը
դրուէր, սիրունիս անպատճառ կ'ուզէր որ
չխօսիմ Սարգիսին հետ, և փոխադարձաբար
Սարգիս ալ չէր ուզեր որ հետզհետէ ամբա-
պընդելու ջանայի ֆուլիկին հետ ունեցած
յարաբերութեանս թելերը:

Անցեալ իրիկուն դրասնեակէս վերադար-
ձիս, բարեկամներէս մէկուն հետ քիչ մը յոգ-
նութիւն առնելու համար կը մտնէի քարե-
ջրատուն մը, ուր կը տեսնեմ սիրունիս և
անձնուէր մտերիմս, որոնք նստած tête à
tête կը տեսնուին ...:

Ամէն խրատաւոր բարեկամ չըլլար, ոչ ալ
ամէն խրատ անսալի:

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ

ԱՆՏԱՆԵԼԻ Է ԱՅՍ ...

[ՍԱԼՕՆԻ ՄԷՋ ԱՐՏԱՍԱՆԵԼԻ]

[Դեռ նոր ամուսնացած եմ Տէր Եւ Տիկ-
Գրիգորեան, բայց իրենց ամուսնութենէն
քանի մը ամիս վերջ երկուքին մէջ տարած ան-
համաձայնութեան մը պատճառով, իրարու
հետ չեն խօսիր: Տիկ. Գրիգորեանի դիմագը-
ծերը կ'արձայայտեն 22 տարիներու բոլորումը,
բայց քիչ մը ջղային է: Տիկ. Գրիգորեան
մեկուսի կը խօսի իր սենեակին մէջ]:

— Ո՛հ, քաշուելու կեանք չէ՛ աս, չէ՛,
չէ՛, ա՛լ չեմ կրնար ապրիլ ասոր հետ, իր
նպատակն է այսպիսի նեղութիւններով զիս
սկարացնել, ու եթէ այս տեսակ ծանր խոր-
հուրդներու տակ ընկճուած տկարանաս, մի-
թէ վերջը մեռնիլ չէ՞, օ՛հ կը սոսկամ, Աստ-
ուած իմ ինչո՛ւ զիս այս վիճակին հասցու-
ցիր, ի՛նչ պիտի ըլլայ կեանքիս վախճանը,
մինչեւ վերջը այսպէս պիտի տառապիմ, բայց
տարակոյս չունիմ, անշուշտ այդպէս ըլլալու
է որ ամուսնութենէս մինչեւ այսօր միշտ կը
գժտինք, կը կռուինք իրարու հետ: Ես ին-
չո՛ւ ամուսնացայ, այսպէս մենակեանց ապ-
րելու համար, ո՛չ գիշերը կը խօսի հետս, ոչ
ալ առտուն, իրիկունը կուգայ չոր բարեւ մը
տալով կ'առանձնա՝ այ իր սենեակը, նոյնպէս
առտուն առանց խօսք մը ընելու կը մեկնի,
եթէ այս սպասաւորներն ալ չըլլային, ի՛նչ
պիտի ընէի, մինակս ճաթէի թերեւս. ա՛հ
թող մեռնիմ, թող մեռնիմ ... ա՛լ ձանձ-
րացայ ... (բարկութեամբ) ի՛նչ, ի՛նչ մեռ-
նիմ ... անո՞ր համար ... բայց անգո՛ւթ
է ան ... զիս չի սիրեր, եթէ սիրելու ըլ-
լար զիս այսպէս կը ձգէր, իր կինը սիրող
մէկը անոր քովը երբէ՞ք չերթա՞ր, հետը չի՞
խօսիր, ո՛չ ո՛չ արդէն սէր չունի վրաս
(մեղմութեամբ) Է՛հ, ի՛նչ ընեմ, ատոր հա-
մար մեռնիմ, թող չի սիրէ, փոյթս անգամ
չեմ ընել ...:

[Պահ մը կը լռէ եւ աչերը կը յառէ
գեղեցիկ երանգներով պատկերի մը որ կախ-
ուած է հո՛ն, ճիշդ դէմը, պատկերը դաշա-
նկար մ'է: Տիկ. Գրիգորեան աւելի՛ որո-
շեստալու համար կը մօտեցայ պատկերին, ուր
կը տեսնէ թեւ թեւի պոյսներ եւլն.]:

— (Բացագանչելով) Ո՛հ կեանքը ասոնցն է, ա՛նա՛ այս է մարդս երջանկացնող կեանքը: Տես սա զոյգը գլուխ գլխի տուած արդեօք ինչե՛ր կ'ըսեն իրարու, սիրոյ ի՛նչ վսեմ զգացումներ արդեօք կ'արտայայտեն մէկզմէկու: Տես անդին ալ ուրիշ զոյգ մ'է որ ընկողմանած են քով քովի, երջանիկ զոյգեր: (Ու բարկութեամբ առի՛ն գալով կը նստի օրօրոց արողի մը վրայ եւ կը պօռայ) Մե՛նք ինչու այսպէս չենք, արդեօք ինչո՞ւ ամուսինս ատելութեան ոգի մը կը ցուցնէ ինձ հանդէպ, արդեօք ուրիշը կը սիրէ ... ո՞վ է այդ վատը, ստորին արարածը, որ ամուսնոյս սէրը պաղեցնել տուած է վրայէս. ա՛խ արդեօք իրօք կը սիրէ ... (արտասուելով) ո՛հ, չառ հաւանական է ...: Մա՛յր, մա՛յր եկուր տես խեղճ դաւակիդ, թէ ի՛նչ դառն վիճակի մը մատնուած է, քու դաւակիդ զոր դուն այնքան գուրգուրանքով կը շփացնէիր, եկուր տես անգամ մը եւ վստահ եմ թէ պիտի գտնես զիս հատած, աղազուն կմախք մը՝ որուն պատճառն է ամուսինս եւ դո՛ւն, (միտս հեկեկալով) դուն որ վայրկեան մը իսկ չէիր հեռացնէր զիս քովէդ, հիմակ ինչո՞ւ անտարբեր կը գտնուիս: Ո՛հ, կա՛յ արդեօք ինծի պէս դժբաղդ մէկն ալ: Օ՛հ, անտանելի է այս ...: (Թաւկիմակը աչքերուն կը ցանի եւ արցունքներ սրբելէ վերջ, պատահականօրէն փոխ կերթայ եւ անքիթ կը դիտէ դուռսի անցուղարձը, բայց հոն ալ իր սիրտը չկրնալով հանդարտեցնել կը պսրտի սենեակին մէջ):

Ըսէ՛ք, անտանելի չէ՞ աս, ո՞վ կրնայ հանդուրժել այս անտանելի առանձնութեան, զգուեցա՛յ ալ ... խորհելէն խորհելէն պիտի խելագարիմ ... պիտի խենթեմ ... (յուզուած) եւ եթէ այդպիսի բան մը ըլլամ, հիւանդանոցէն պիտի հանեն դիակս ... ի՛նչ ահուկի բան Աստուած իմ: Բայց ինչո՞ւ այսչափ կը խորհիմ այսօր, ո՛հ, կարծեմ չի պիտի կրնամ հանդարտեցնել սիրտս, ամբողջ ջիւղերս թունդ ելան, կը սարսռամ կոր, ի՛նչ ընեմ որ չի խորհիմ, եթէ քիչ մը դաշնակ նուագեմ յուզումս արդեօք կը նուազի, թե՛րե՛ւս ...: (Մօտենալով դաշնակին կը նստի արողին վրայ, ու կսկսի նօթաւորել դարձնել բարկութեամբ) Էօ՛Ֆ ո՞րը երգեմ, ո՞րը

արդեօք յոյգերս ու խորհուրդներս պիտի փարատէ ... կեցիր, Պէթովէնի սա՛ գողտրիկ sonatը զարնեմ:

[Ու կը շարունակէ Տիկինը ջիւղերը համակ գրգռուած վիճակի մէջ այդ սրագողեցիկ երգը, բայց չի կրնար շարունակաբար նուագել, միտս բնդհատելուն պատճառով, որովհետեւ կը լսէր դուռը ոտնաձայներ, որոնք իր ամուսնին կը նմանէր, եւ որովհետեւ կուգէր որ ամուսինն ալ իմանայ իր սրտնցները, կես կը թուլու նուագումը ու սենեակին մէջ երթելեկելով՝ կը շարունակէ բարձրաձայն]:

(Յուզուած) Ա՛խ, Երուանդս ի՛նչ ըրած եմ քեզի որ զիս այսպէս լքած ես, ի՛նչո՞ւ այսքան անգուլթ կը գտնուիս ինձ հանդէպ, չե՛ս խղճար վիճակիս վրայ, եթէ դիտնայիր թէ քեզ ի՛նչպիսի ջերմ սիրով մը կը սիրեմ, կրկին անտարբեր պիտի գտնուիս, ու զիս ատես լռին կերպով, ա՛ն խղճա՛յ վրաս, ներէ՛ ինծի եթէ քեզ հակառակ բան մը ըրի, այսքան անտարբերութիւն ... օ՛հ չիտակը չէի յուսար ... (յալահառաչ) այս որչա՛փ դժբաղդ մէկն եմ եղեր Աստուած իմ, այսքան վիշտ ունենամ ... օ՛հ, անտանելի է այս ...: Երթա՛մ, երթա՛մ եւ պաղատիմ իւրեն ...: (Նսիմ կը դառնայ):

ՊԵՃՐԱՄ

HIGH - LIFE

Polka

Ստացանք Գ. Թօլայեանի անդրանիկ հեղինակութիւնը եղող Հայ-Լայֆ բօլքան, որ կոչուած է ճիշդ եղանակին լոսն ըլլալ սալօններու, երեկոյթներու մէջ, իր շիք դարացուած քներով եւ քանաքան յատկութիւններով:

Գ. Թօլայեան կրտսեր եղբայրն է ծանօթ հրապարակագիր Ե. Թօլայեանի, որուն այս առաջին հեղինակութենէն կրնայ յուսացուիլ ապագայի երգանան մը ըլլալու տաղանդը:

Ջերմապէս կը յանձնարարենք այս ընտիր ձայնատետրը դաշնակի սիրահարներուն եւ ամէն անոնց՝ որոնք կը փափաքին տաք բօլքա մը պարել տաք սալօններու մէջ:

ԶԻԿ-ԶԱԿ ՆՕԹԵՐ

Ինչո՞ւ համար

- Բանաստեղծները անօթի կը մեռնին:
- Մեր երիտասարդները գործերնուն չիտակ տուն չեն երթար:
- Պալատի թաղ. խորհուրդը թօփ-թաբուի եկեղեցիին ունեցած պարտքը չվճարեր:
- Սիրելի բարեկամածանօթս Մ. Ա. Պարսաման միմիայն սիրային բանաստեղծութիւն կը գրէ:
- Տօլապ-Տէրէյի աղջիկները եալախ կ'ըլլան:
- Ընդհանրապէս որբեւայրիները անպատճառ եալիմա գուզէն մը կ'ամ եղբայր մը կ'ունենան:
- Կարգ մը տղաքներ դպրոցէն կը փախչին:
- Շատ մը օրլախներ բերայի մէջ լրագրովաճառ Գէորգ աղայի խանութին առջեւ կը շարունակեն:
- Վարժուհիները կեղծաւոր կ'ըլլան:
- Մեր բաժանորդները թերթ կը կարդան և բարան չեն տար:
- Ես, ձախ ձեռքով գիր կը գրեմ:
- Բանթալօնսըղ մուշուկները պօլ դրամ կը խարճեն և տակերնուն բանթալօն մը չեն առներ:
- Ե. Գոլանճեան չիմա ալ բանաստեղծութիւն չգրեր:
- Մարդ մը չկայ որ կիները չսիրէ:
- Հրանտ Մամուրեանի սանձին կը բռնէ, կաս կարմիր կ'ըլլայ, ամէն անգամ որ «Հանրագիտակ»ը ձեռք կառնէ:
- Մեր գրագէտներու երկրին մէջ սոսկալի սով մը կը տիրէ:
- Աղջիկ մը մէյ մը երեսդ, մէյ մըն ալ ոտքիդ կը նայի:
- Զիլինկերեան խելքն ու միտքը եռաձայնի կուտայ և քիչ մը գոնէ խնամք չտանի իր միւս երգեցիկ մանուկներուն:
- Դեղագործները թափթփած կ'ըլլան և փաստաբանի գրագիրները յաւակնոտ:
- Երկու բարայի հայերէն չգիտցող հաւկիթ մուշուկները գաղղիներէն բառեր կը նետեն հայերէն խօսած ատեննին:

— Երկու տող ոտանաւոր գրողը բանաստեղծ կը կարի գլխունուս:

— Կարգ մը ուսուցիչներ կը քնանան դասախօսած ժամանակնին:

— Բերայի թաղ. խորհուրդը խօսք կուտայ և չի նորոգեր Տօլապ-Տէրէյի խարխուլ վարժարանը:

— Բերայի ճեպի տեղի միւսիւնները իրենց սիրունիկ եկեղեցին տեսնել կը փափաքին:

— Սիրելի բարեկամս Կ. Սաւախեան ճամբան գացած ժամանակ միշտ կօշիկներուն վրայ կը նայի:

— Արամ Անտոնեան սիրելի հօրաքնուորդիս «Սուրհանդակ»ի խմբագրապետութենէն կը քաշուի:

— Մեր խմբագիրները ուրիշ օրլախներ կ'ըսեն, և ինքզինքնին իբր թէ բարայով թերթ կարգացող կլլեյնել կը ջանան:

— Թուայեա ինքզինքը je m'en fichiste կը ցուցնէ և պզտիկ կամիթէ մը կրակ ու բոց կը կտրի:

— Կարգ մը monopoliste խմբագրապետներ նորեւեկներու յօդուածները չեն հրատարակեր:

— Երազը ամենէն անուշ վայրկեանին կը վերջաւայ:

— Բերայի բոլոր աղջիկները ինծի չեն նայիր և Հրանտին հոգի կուտան:

Եւ վերջապէս ինչո՞ւ համար այսքան գլուխ կ'արդուեմ ես:

Որպէս զի սիրելի ընթերցողներս հասկընան թէ ամենամեծ զէվզէկ մը և կատարեալ շատախօս մը գոյութիւն ունի Բերայի մէջ:

ՊԱՐՈՅՐ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԱՅՈ ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ՍՈՈՒՄԱԿԻՐԻՆ ՍՈՒԱՌԷՆ

ԼԻԼԱԷ

Մեր յաջորդ թիւէն գնել փափաքողները պէտք է այժմէն գիմեն Մեծ. Նազարէթ Էֆ. Այճեանի:

ՏԵՌԱԳԻՐ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. Անցեալ գիշեր ուշ ժամանակ ընտանիքի մը չորս փարսախ հեռաւոր ազգականներէն երիտասարդ մը, որ իբր հիւր հոգ կեցած էր, կէս գիշերին մօտը պատրուակելով տան օրիորդէն վերմակ մը ուղեւոր համար սխալ հասցէի դիմելով. հորը պետերը շոշափեր է . . . : Արդեօք փառաւոր ծեծ մը վերմակէն աւելի տաքութիւն չէր կրնար տալ միւսիւին :

ՆՈՅՆ. — Քիւ ֆիւրճի Մարիամի ըրախիճի բարեկամները իւր յուզարկաւորութեան վերջին յարգանք մը ընծայելու համար իրենց խառն ճնկեւաբանին, գերեզմանատան մէջ հինգ պինդ ըրախին փառաւորապէս խմցին, պարապ շիշերն ալ տնկելով մեռեալին ոտքին և գլխուն վերեւ :

ԲԵՐԱ. — Կար կարողներու պարահանդէսին ներկայ գտնուողներէն չիք, բայց գրպանը գլխուն պէս անամէջ միւսիւ մը, տամանները մեծարելու համար պիւֆէն գրամէ չեղլալու համար գրպանները լեպուցած էր, զոր կը բաշխէր լիաբուռն :

ՆՈՅՆ. Դարցեալ նոյն երեկոյթին Սկիւտարցի մօնսկն երիտասարդ մը, կըսուի թէ բաղդը ունեցած է վաթսուննոց տամամը սիրաշահելու մինչեւ արշալոյս : (Մինչեւ հիմա այն համուզումը ունէինք թէ՛ Սկիւտարէն միայն բանաստեղծ կ'եղար, բայց փորձով կը հաստատուի հիմա որ սկսեալ ալ կ'արտադրէ եղեր այդ նաշելի գիւղաքաղաքը . Ծ. Խ.) :

ԴԱՏԸ-ԴԻԻՂ. Ամիսը վեց սակ առնող, ագիղէն վեր, գեղեցիկէն վար ներաւա, տ և պօն ժողո, պօն սուառճի միւսիւ մը լապտեր ի ձեռին 300նոց օրիորդ մը կը փնտռէ, տուներն ի վեր ձգելով իր պոչով աչուկները . . . : (Ազաշելով կ'ազաշենք. որպէս զի ուրիշ առթիւ այս տեսակ խաւուր իշի լուրերը մեղ չի հասցնէք, նկատելով որ «Հանրագիտակ»ը խաւուր ճիւրի կին օղկանը չէ . Ծ. Խ. :

ՆՈՅՆ. Կիրակի օր հաւատացեալ օրիորդ մը, հաւատքէն աւելի նշանածին տուած ռանսկովուն սիրոյն, տաճարին մէջ չորս ժամ չի վի կտրեց . . . : Մինչ երիտասարդին լստիկներուն տակը սրտէն աւելի մաշած ըլլալուն չէր, համարձակէր տունէն դուրս ելլալ. սահելու վախէն : (Աստուած դայ հախէն . Ծ. Խ.) :

ԲԱՆԿԱԼԻԹԻ. Հոս տեղի գիշերային զբոսանքն է հօրը : Անցեալ իրիկուն ընտանեկան շրջանակի մը մէջ Տօքթ.-էս ղէվզէկ միւսիւ մը, այնքան տաքօրէն կը շարունակէր այդ խաղը, որ փոխանակ հօր ըսելով ձեռքը դրամի պնակին վրայ դնելու . . . քովի օրիորդին կուրծքին հօք է ըսիր :

Արսուսկր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գասէսի քիւ 52.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՆԱԳԵՐՁԵՂԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքային տնտեսութեամբ եւ գինեւորական անմրցելի տաճարութեամբը շահած է բոլոր իրեն ղիմող, յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելաշէտներու եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆուրիւշներու ճոխ միջոցը մը սրատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է։
Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին։ 50—21

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ փնտաւար նիւթերէ բոլորովին զերծ է։



Յիշեալ ջուրը մաշերը զուսուտորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին Կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եւ

ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ Ճերիտէի Վեգաի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են։

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապաւորուած ջրիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն։

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով զուսուտորել ձեր մաշերը, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր արջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը անուր համար դիմեցէք Մահմուտ բաշա «տոտէսի», յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշերուն զուսուտորման համար։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան։



ԱՌԻԹԷՆ
ՕԳՏՈՒԵՑԷՔ
ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ
Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ
Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ
Ճեղաղ պէյ Խանիկ
Տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը, որք ուղղակի ներածուելով Սեյլանէ, Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճապոնէ։

Ամենէն դժուարահասներն իսկ կըրնան գոհանալ թէյերու թարմութեամբ հոտովն ու համովը։

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ եւ փոքր քանակութեամբ։

Ուշադրութիւն մարտային։

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ս.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌՍՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստուին արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ : Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կառարեղութիւններով :

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար :

Ս. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել :

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճաճախորդները :

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50—10

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են :